

## **Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Ֆինանսական հաշվետվությունների նպատակը կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին անկողմնակալ տեղեկատվությամբ ապահովելն է, որը նրանց օգտակար է տնտեսական որոշումներ կայացնելու համար:

Ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչներից է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

«Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ»՝ Ձև N 5-ում ներկայացվում է՝

1. հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանության մասին հայտարարությունը,

2. ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու հիմունքների, ինչպես նաև ընտրված և էական գործառնությունների ու իրադարձությունների նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը,

3. հաշվապահական հաշվառման ստանդարտներով պահանջվող տեղեկատվության բացահայտումը, որոնք ներկայացված չեն ֆինանսական հաշվետվությունների ձևերում, և

4. լրացուցիչ տեղեկատվության տրամադրումը, որը ներկայացված չէ ֆինանսական հաշվետվությունների ձևերում, սակայն անհրաժեշտ է ճշմարիտ ներկայացման համար:

### **1. Հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանության մասին հայտարարություն**

Ֆինանսական հաշվետվությունները պետք է ճշմարիտ ներկայացնեն կազմակերպության ֆինանսական վիճակը, գործունեության ֆինանսական արդյունքները և ֆինանսական վիճակում փոփոխությունները: Հաշվապահական հաշվառման ստանդարտների պատշաճ կիրառումը, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ բացահայտումներով, հանգեցնում է ֆինանսական հաշվետվությունների ճշմարիտ ներկայացմանը:

Կազմակերպությունը, որի ֆինանսական հաշվետվությունները բավարարում են հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին, պետք է բացահայտի այդ փաստը: Ֆինանսական հաշվետվությունները չեն կարող որակավորվել հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանող, եթե դրանք չեն բավարարում կիրառված որևէ ստանդարտի բոլոր պահանջներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Հաշվառման մոտեցումների սխալ կիրառումը չի ուղղվում ոչ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտմամբ, և ոչ էլ կից ծանոթագրություններում ներկայացված բացատրություններով:

### **2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ներկայացում**

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը այն կոնկրետ սկզբունքներն են, հիմունքները, եղանակները, կանոնները, ձևերը և ընթացակարգերը, որոնք ընդունվում են կազմակերպության կողմից՝ հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և ներկայացնելու համար:

Կազմակերպության ղեկավարությունը կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է ընտրի և կիրառի այնպես, որ ֆինանսական հաշվետվությունները բավարարեն կիրառվող յուրաքանչյուր ստանդարտի բոլոր

պահանջներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին: Հատուկ պահանջի բացակայության դեպքում ղեկավարությունը պետք է մշակի այնպիսի քաղաքականություն, որ ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվությունը լինի՝

- ա) տեղին՝ օգտագործողների կողմից որոշումներ ընդունելու համար, և
- բ) արժանահավատ այն առումով, որ այն.

I. ճշմարիտ ներկայացնի կազմակերպության գործունեության արդյունքները և ֆինանսական վիճակը,

II. արտացոլի ոչ միայն իրավական ձևը, այլև իրադարձությունների և գործառնությունների տնտեսական բովանդակությունը,

III. չեզոք է, այսինքն զերծ է կանխակալությունից,

IV. հաշվենկատ է, և

V. ամբողջական է բոլոր էական դրսևորումներում:

Հաշվապահական հաշվառման կոնկրետ ստանդարտի և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերի բացակայության դեպքում ղեկավարությունն իր դատողությունների հիման վրա ինքնուրույն մշակում է հաշվապահական հաշվառման այնպիսի քաղաքականություն, որը կազմակերպության ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին կապահովի օգտակար տեղեկատվությամբ: Նշված դատողություններն անելիս կազմակերպության ղեկավարությունը պետք է հաշվի առնի.

ա) մման և կապակցված հարցերին առնչվող հաշվապահական հաշվառման ստանդարտներում ներկայացված պահանջները և ուղեցույցերը,

բ) ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի սահմանումները, ճանաչման և չափման չափանիշերը, ինչպես շարադրված է «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքով, և

գ) գործնական փորձը՝ այն չափով, որով դրանք համահունչ են սույն պարբերության ա) և բ) ենթակետերին:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող բաժինը պետք է նկարագրի հետևյալը.

ա) ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված չափման հիմունքը (հիմունքները), և

բ) հաշվապահական հաշվառման քաղաքականության յուրաքանչյուր կոնկրետ մոտեցումը, որն անհրաժեշտ է ֆինանսական հաշվետվությունները ճիշտ ընկալելու համար:

Պետք է նկարագրվեն յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության համար կիրառված չափման հիմունքը (հիմունքները) (պատմական արժեք, ընթացիկ արժեք, իրացման արժեք, իրական արժեք կամ ներկա արժեք): Երբ ֆինանսական հաշվետվություններում կիրառվում է ավելի քան մեկ չափման հիմունք, օրինակ, երբ վերագնահատվում են որոշակի ոչ ընթացիկ ակտիվներ, բավարար է ներկայացնել ակտիվների և պարտավորությունների դասերը, որոնց նկատմամբ կիրառվել է տվյալ չափման հիմունքը:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, որը կազմակերպությունը կարող է քննարկել ներկայացման համար, ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

ա) հասույթների ճանաչում,

բ) համախմբման սկզբունքներ, ներառյալ դուստր ընկերությունների և ասոցիացված կազմակերպությունների,

գ) ընկերությունների միավորումներ,

դ) համատեղ գործունեություն,

ե) նյութական և ոչ նյութական ակտիվների մաշվածություն (ամորտիզացիա) և ճանաչում,

զ) փոխառության ծախսումներ,

- է) կառուցման պայմանագրեր,
- ը) ներդրումներ,
- թ) ֆինանսական գործիքներ և ներդրումներ,
- ժ) վարձակալություն,
- ժա) հետազոտության և զարգացման ծախսումներ,
- ժբ) պաշարներ,
- ժգ) հարկեր, ներառյալ հետաձգված հարկերը,
- ժդ) պահուստներ,
- ժե) թոշակային ապահովության ծախսումներ,
- ժզ) արտարժույթի փոխարկում և հեջավորում,
- ժէ) ձեռնարկատիրական և աշխարհագրական սեզմենտների սահմանումը և սեզմենտների միջև ծախսումների բաշխման հիմունքը,
- ժը) դրամական միջոցների և դրանց համարժեքների սահմանումը,
- ժթ) տղաճի (ինֆլացիայի) հաշվառում,
- իա) պետական շնորհներ
- իբ) վերագնահատում:

### **3. Հաշվապահական հաշվառման ստանդարտներով պահանջվող տեղեկատվության բացահայտումը**

Այս բաժնում տրվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով պահանջվող այնպիսի տեղեկատվության բացահայտումը, որոնք ներկայացված չեն ֆինանսական հաշվետվությունների այլ ձևերում: Այն ներկայացվում է համակարգված ձևով և ներառում է հաշվապահական հաշվեկշռում, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում արտացոլված գումարների պատմողական նկարագրություն կամ դրանց ավելի մանրամասն վերլուծում (այդ թվում աղյուսակների տեսքով), ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն, օրինակ, պայմանական և պայմանագրային պարտավորությունները: Դրանք ընդգրկում են տեղեկատվություն, որը պահանջվում և խրախուսվում է բացահայտել հաշվապահական հաշվառման ստանդարտներով, ինչպես նաև այլ բացահայտումներ, որոնք անհրաժեշտ են ճշմարիտ ներկայացումն ապահովելու համար:

### **4. Այլ բացահայտումներ**

Այս բաժնում կատարվում են պայմանական իրադարձությունների, պարտավորությունների, կազմակերպության գործառնությունների բնույթի և նրա հիմնական գործունեության նկարագրության, մայր կազմակերպության և խմբի գլխավոր մայր կազմակերպության անվանման, աշխատողների թվաքանակի, ինչպես նաև ֆինանսական և ոչ ֆինանսական բնույթի այլ բացահայտումներ:

**Թաթուլ Մովսիսյան**  
**«Էկոնոմիկա և իրավունք» 2.2000**